

«Որակի ներքին ապահովման մեխանիզմներ. ՈԱԱԿ-ի դերը անցումային ժամանակաշրջանում»

Անուշավան Մակարյան, Աննա Կարապետյան
«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ
ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Հոկտեմբերի 8-9
ԵՐԵՎԱՆ - 2012

Անցումային ժամանակաշրջան

որակի վերահսկում

որակի ապահովում
բարելավման ուղղությամբ

**ՈԱԱԿ-ի ռազմավարական նպատակ.
*աջակցել ՄՈՒՀ-երում որակի մշակույթի ձևավորմանը,
ինչը կհանգեցնի համակարգի փոխակերպմանը:***

ՈԱԱԿ-ի գործունեության մի վեկտորը ուղղված է
հաստատությունների հետ համագործակցությանը:

Անցումային ժամանակաշրջան

Վերահսկումն ունի մեկ հիմնական խնդիր.

*պարզել, թե ընդունված որոշումները ինչ
չափով են կատարվում:*

Որոշումները կարող են կայացվել.

- ✓ հաստատությունից դուրս,
- ✓ հաստատության ներսում:

Անցումային ժամանակաշրջան

Որակի ապահովման խնդիրները.

- պարզել որոշումների կատարման ազդեցությունը կրթության որակի վրա / որոշումների արդյունավետությունը

- հիմքեր պատրաստել նոր որոշումների ընդունման համար:

Մոտեցումների այս տարբերության գիտակցումը ստիպում է փոփոխություններ մտցնել հաստատության կառավարման համակարգում:

Անցումային ժամանակաշրջան

ՌԻսումնական համակարգը բավականին իներտ է փոփոխությունների նկատմամբ:

ՈԱԱԿ քաղաքականությունն է եղել.

համագործակցության միջոցով հաստատություններին ուղղորդել դեպի այնպիսի իրավիճակ, երբ փոփոխությունները դառնում են անհրաժեշտ և անխուսափելի:

Որպես համագործակցության գործիք ընտրվեց ինքնավերլուծությունը.

թույլ կտա հետևություններ անել հաստատության ներսում իրականացվող, այդ թվում որակի ապահովման ներքին գործընթացների մասին:

Անցումային շրջանի խնդիրները. ՌԱԱԿ

Օրինականության դաշտը անկատար էր,
ՄՈՒՀ-երի հետ համագործակցության
եզրերը ձևավորված չէին:

Խնդիր 1

- Մշակել հավատարմագրման չափանիշներ և չափորոշիչներ
- Մշակել հավատարմագրման ձևաչափերն ու ընթացակարգերը

Խնդիր 2

- փորձարկել հավատարմագրման չափանիշներ և չափորոշիչներ
- փորձարկել հավատարմագրման ձևաչափերն ու ընթացակարգերը

Անցումային շրջանի խնդիրները. ՄՈՒՀ-եր

Որակի ներքին ապահովման համակարգը ձևավորվման փուլում էր. ինքնագնահատման իրականացումը նոր գործընթաց էր:

ԽՆԴԻՐ 1

- հավաքել և համակարգել տվյալները
- ձևավորել մարդկային ռեսուրսներ

ԽՆԴԻՐ 2

- վերլուծել տվյալները
- գրել հիմնավոր ինքնավերլուծություն

ՈԱԱԿ փորձարկումներ. ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման չափանիշներ և ձևաչափեր

- 2010թ. ծրագրային հավատարմագրման չափանիշների և ծրագրային ինքնավերլուծության ձևաչափի փորձարկում 6 բարձրագույն և 1 միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում
- 2010-2011թթ. ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և ինստիտուցիոնալ ինքնավերլուծության ձևաչափի փորձարկում 4 բարձրագույն ուսումնական հաստատություններում

ՈԱԱԿ փորձարկումներ. ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման ընթացակարգեր

- 2011-2012թթ. ՀԲ ծրագրի շրջանակներում ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման փորձարկում 2 բարձրագույն ուսումնական հաստատություններում
- 2011-2012թթ. ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձարկում 3 քոլեջներում

ՈԱԱԿ-ի համակարգողի փորձից

Համակարգողի առաջնային խնդիրը.

Ինչպիսի՞ն է ինքնավերլուծությունը, թույլ կտա՞ կատարել արտաքին գնահատում:

- ոչ վերլուծական մոտեցում /գործիքների բացակայություն/,
- ոչ բավարար տեղեկատվություն չափորոշիչի գնահատման համար,
- տվյալ չափորոշիչին անմիջականորեն չվերաբերող հավելյալ տեղեկատվություն,
- տվյալներ, առանց համապատասխան հիմնավորումների:

ՈԱԱԿ-ի համակարգողի փորձից

Առաջացած խնդիրները՝

Փորձագիտական այցի ընթացքում բացահայտվում էին՝

- գործընթացներ, որոնք ներկայացված չէին ինքնավերլուծությունում,
- ոչ բոլոր ներքին շահակիցներն էին տեղեկացված ինքնագնահատման գործընթացի մասին:

Զեկույցի պատրաստման ընթացքում ինքնավերլուծությունում բավարար հիմքերի բացակայությունը հնարավորություն չէր տալիս գնահատելու հաստատության գործունեությունը:

Առաջին շրջանի փորձի ներկայացում

Ներկայացնել որոշում կայացնելու գործընթացում դասավանդողների և ուսումնառողների ներգրավվածության արդյունավետության վերլուծությունը:

Դասավանդողների և ուսումնառողների անմիջական մասնակցությունը գործընթացներին **ապահովում է** առավելագույն արդյունավետություն՝ որոշումների կայացման թափանցիկություն, օբյեկտիվություն, հրապարակայնություն, գործունեություն:

Դասախոսների և ուսումնառողների **առաջարկությունները** արձանագրվում են և **հաջորդ նիստի ժամանակ** առաջարկությունների կատարման մասին համապատասխան **որոշում է կայացվում:**

Առաջին շրջանի փորձի ներկայացում

Ներկայացնել հաստատության կազմակերպական կառուցվածքի արդյունավետությունը: Ինչքանո՞վ է այն համահունչ հաստատության առաքելությանը:

Համալսարանի կազմակերպական կառուցվածքային ստորաբաժանումները ստեղծվել են հաստատության առաքելության, նպատակների իրականացման և խնդիրների լուծման նպատակով: Դրանց գործունեության առավել արդյունավետությունն ապահովելու նխատակով նախատեսվում է կառուցվածքային փոփոխություն:

Արդիականացվել է համալսարանի կառավարման համակարգը, ներդրված են կառավարչական հմտություններով կրթական համակարգի արդյունավետ կառավարման կառուցակարգեր, այն դարձել է տեղեկատվական հաղորդակցման ցանց:

Կազմակերպական կառուցվածքի սխեմատիկ պատկերը փակցված է հաստատության առաջին հարկում և այն հասանելի է ոչ միայն աշխատակազմին, այլև ներքին և արտաքին շահակիցներին:

Երկրորդ շրջանի փորձի ներկայացում

ՉԱՓՈՐՈՇԻՉ 7.3: Մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտակումը և դրանց արդյունավետության գնահատումը:

Մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման ընթացակարգը .

Հատուկ **ընթացակարգեր չկան: Մշտադիտարկումը**

իրականացվում է **կառավարման մարմինների միջոցով**, որոնց

առաջարկություններով իրականացվում է վերանայումը:

Երկրորդ շրջանի փորձի ներկայացում

Մասնագիտությունների կրթական ծրագրերի պարբերաբար գնահատման քաղաքականությունը, ընթացակարգերը և մեխանիզմները.

Գտնվում է մշակման փուլում:

Արդյո՞ք մշտադիտարկման և վերանայման գործընթացները պարբերաբար կրկնվող են:

ԱՅՈ, պարբերաբար

- Մշտադիտարկման փուլում բացահայտված արդիականացման ու բարեփոխումների **անհրաժեշտության դեպքում** իրականացվում է **վերանայում:**

Երրորդ շրջանի փորձի ներկայացում

- *ՉԱՓՈՐՈՇԻՉ 10 Ե. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:*


Բուհի որակի ներքին ապահովումը կազմակերպվում, գնահատվում և վերլուծվում է քաղաքականությանը համահունչ: Կատարվում է ուսումնական գործընթացի մոնիտորինգ, չափումներ և վերլուծություն: Ինչպես նաև կատարվում է կրթական բոլոր ծառայությունների գնահատում և համապատասխան վերլուծություն՝ արտաքին գնահատմանը մասնակցելու, բացերը լրացնելու և կրթական բարեփոխումներ մտցնելու համար տարբեր կառույցներում: Կազմվել են սոցիալական հարցման թերթիկներ բոլոր շահակիցների բավարարվածության աստիճանը որոշելու համար:

Փոփոխությունների դինամիկան

Արդյունքում առկա է առաջընթաց.

- աշխատանքների արդյունավետ կազմակերպում,
- ինքնավերլուծության իրականացման մոտեցումների փոփոխություն
- ՈԱԱԿ-ի դերի վերաբերյալ վերաբերմունքի փոփոխություն

Որակի մշակույթի ձևավորման սկզբնական քայլերը.



Ինքնագնահատման իրականացման գործընթացը. ՈԱԱԿ-ի դերը

Գործընթացում համակարգողը ուղղորդում էր.

- մարդկային ռուսուրսների ներգրավման գործընթացը,
- խմբի աշխատանքների կազմակերպումը,
- չափանիշների և չափորոշիչների մեկնաբանումը,
- տվյալների հավաքագրման նպատակով գործիքների մշակումը,
- ինքնավերլուծության իրականացումը:

Ինքնագնահատման իրականացման գործընթացը. ՈԱԱԿ-ի դերը

Հանդիպումներ ինքնագնահատման գործընթացն իրականացնող խմբի հետ ուղղորդելով հետևյալ գործընթացներում.

- ինքնավերլուծության խմբի ձևավորում՝ ներգրավելով
 - ✓ դասախոսներ, ուսանողներ, շրջանավարտներ,
 - ✓ տարբեր ստորաբաժանումների ներկայացուցիչներ՝ անհրաժեշտ տվյալների տրամադրման համար

- աշխատանքների բաշխում՝
 - ✓ առանձին չափորոշիչների վերաբերյալ տվյալների հավաքման և նախնական տեքստերի պատրաստման խմբեր,
 - ✓ յուրաքանչյուր չափորոշիչի վերլուծության նախնական տարբերակի պատրաստում և քննարկում ինքնավերլուծության խմբի հետ,
 - ✓ վերջնական խմբագրում իրականացնող խումբ:

Ինքնագնահատման իրականացման գործընթացը. ՈԱԱԿ-ի դերը

Հանդիպումներ ինքնագնահատման գործընթացն իրականացնող խմբի հետ ուղղորդելով հետևյալ գործընթացներում.

- չափորոշիչների մեկնաբանում՝ մուհի առաքելության և սահմանված նպատակների տեսանկյունից
- տվյալների հավաքագրում և ամփոփում՝ քննարկելով հարցաշարերը՝ շահակիցների բավարարվածությունը պարզելու տեսանկյունից

Ինքնագնահատման իրականացման գործընթացում համատեղ
աշխատանքի արդյունքը
ՄՈՒՀ-ի ձեռքբերումները.

- ինքնավերլուծություն իրականացնելու կարողություններով
օժտված աշխատանքային խումբ,
- փաստաթղթերի «գույքագրում»,
- ըստ չափորոշիչների հավաքագրված որոշակի տվյալներ,
- որակի ներքին ապահովման մշակված և փորձարկված
գործիքներ,
- արձանագրություններ շահակիցների հետ հանդիպումների
մասին,
- Ինքնավերլուծության մեկնարկ:

Ինքնագնահատման իրականացման գործընթացում համատեղ աշխատանքի արդյունքը

ՈԱԱԿ-ի ձեռքբերումը.

- Ի՞նչ է ուզում անել ուսումնական հաստատությունը:
- Ինչպե՞ս է փորձում դա անել:
- Ի՞նչպես է հաստատությունը **համոզվում**, որ արդյունավետ է աշխատում:
- Ի՞նչ փոփոխություններ կան հաստատությունում բարելավման ուղղությամբ:

Որակի ներքին ապահովման համակարգի ներդրումը

Ձեռքբերումներ.

- որակի ապահովման մեխանիզմների կարևորում ,
- որակի մշակույթի ձևավորմանն ուղղված գործընթացներ,
- շահակիցների ներգրավվածության ընդլայնում:

Որակի ներքին ապահովման համակարգի ներդրումը

Մարտահրավերներ.

- որակի ներքին ապահովման գործիքների բարելավում և նոր գործիքների մշակում,
- տվյալների հավաքագրման, վերլուծության և արդյունավետ օգտագործման մեխանիզմների կիրառում

Շնորհակալություն

www.anqa.am

